AMAA
ARMENIAN MISSIONARY
ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պրն. Խաչատրյան,

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցությունը (AMAA) նախատեսում է Վարդենիս խոշորացված համայնքի Վարդենիս բնակավայրում ստեղծել Մանկական զարգացման եւ Ցերեկային խնամքի կենտրոններ, որոնք միասին կսպասարկեն Վարդենիս համայնքի մինչեւ 60 երեխայի:
Մանկական զարգացման կենտրոնը կծառայի 3-ից 6 տարեկան երեխաներին՝ (նախադպրոցական տարիք) ընդհանուր 40 երեխա, իսկ ցերեկային կենտրոնը՝ 6-ից 13 տարեկան դպրոցահասակ՝ 20 երեխայի:

Երեխաների ընդունելության գործընթացը, ինչպես նաեւ նրանց խնամքը, սննդի ապահովումը, մասնագետների ներգրավումը, նրանց վարձատրությունը եւ շարունակական մասնագիտական զարգացումը կիրականացնի AMAA-ն: AMAA-ն հանդես կգա որպես ծրագրի հիմնական կազմակերպիչ եւ պատասխանատու կառույց:

AMAA-ն համաձայնության դեպքում կօգտագործի համապատասխան տարածքը հնգամյա ժամկետով՝ վերակնքման հնարավորությամբ յուրաքանչյուր հինգ տարին մեկ: Տարածքի պահպանման, տեխնիկական սպասարկման եւ անհրաժեշտ վերանորոգման բոլոր ծախսերը կհոգա AMAA-ն:

Սույն նախաձեռնությունն ուղղված է երեխաների սոցիալական պաշտպանության, կրթական աջակցության եւ ընդհանուր բարեկեցության ապահովմանը՝ ստեղծելով զարգացնող, հոգատար եւ անվտանգ միջավայր:

Վերը նշված նպատակներից ելնելով՝ առաջարկում ենք մեզ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Վարդենիս բնակավայրի Խ.Ստեփանյան փողոցի 15/1 հասցեում գտնվող Երաժշտական դպրոցի առաջին հարկի 246քմ տարածքը, որի դիմաց պարտավորվում ենք ամբողջությամբ փոխել շենքի տանիքը՝ այն դարձնելով թիթեղյա (ընդհանուր գումարը 8.302.710 դրամ), իսկ առաջին հարկի վերանորոգման եւ կահավորման վրա ներդնել 14.000.000 դրամ:

Մանկական զարգացման կենտրոնում եւ Ցերեկային խնամքի կենտրոնում նախատեսվում է ունենալ մինչեւ 20 աշխատակից:

Հարգանքով՝

Արեն Դեյիրմենջյան
ԱՀԱԸ Հայաստանի տնօրեն

18 Baghramyan Ave, Yerevan, 0019
+374 10 54 35 76 info@amaa.am
www.amaa.am AMAA Armenia